

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐՏԱՏՈՍՍԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008 ԹՎԱԿԱՆ

«ԻՍԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

2008թ-ի սեպտեմբերի 15-ից մինչև 2008թ-ի հոկտեմբերի 10-ը ներառյալ (20 աշխատանքային օր) հրապարակային առաջարկի միջոցով նախատեսվում է անցկացնել «ԻՍԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի բաց բաժանորդագրություն:

Իսկ 2008թ-ի հոկտեմբերի 13-ից մինչև 2008թ-ի հոկտեմբերի 15-ը ներառյալ (3 աշխատանքային օր) բաց բաժանորդագրության արդյունքների հիման վրա նախատեսվում է տեղաբաշխել «ԻՍԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերը՝ հետևյալ պայմաններով.

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	10,000 ՀՀ դրամ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՎԱԼԸ	1,000,000,000 ՀՀ դրամ
ՔԱՆԱԿԸ	100,000 հատ
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ	24 ամիս ( <i>մարտի 2010 թվականի հոկտեմբերի 13-ին</i> )
ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԳՐՈՒՅՔԸ	11.50%
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ	ըստ ներդրողների կողմից ներկայացված մինչև մարտի 2010 թվականի տարեկան եկամտաբերությամբ՝ համաձայն թողարկողի կողմից հաստատված պարտատոմսերի թողարկման կարգի և պայմանների՝ առավելագույնը 11.50%
ԱՐԺԵԿՏՐՈՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	3 ամիս պարբերականությամբ պարտատոմսի անվանական արժեքի 2.875% չափով ( <i>2009 թվականի հունվարի 13-ին, ապրիլի 13-ին, հուլիսի 13-ին և հոկտեմբերի 13-ին, 2010 թվականի հունվարի 13-ին, ապրիլի 13-ին, հուլիսի 13-ին և հոկտեմբերի 13-ին հաջորդող 6 աշխատանքային օրերի ընթացքում</i> )
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ	Չերաշխավորված տեղաբաշխում
ՆԵՐԳՐՎԱԾ ՕՊՑԻՈՆՆԵՐ	Պարտատոմսերի սեփականատերերը իրավունք ունեն թողարկողից պահանջել պարտատոմսերի վաղաժամկետ մարում համաձայն թողարկման կարգի և պայմանների
ՕՊՑԻՈՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	2009 թվականի հոկտեմբերի 13-ը
ՕՊՑԻՈՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԻՆԸ	Պարտատոմսի անվանական արժեքը

«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի պարտատոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2008 թվականի սեպտեմբերի 1-ի 1/882-Ա որոշմամբ: Պարտատոմսերի ազդագիրը հրապարակվել է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ՝ [www.ameribank.am](http://www.ameribank.am) և «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ՝ [www.idealsystem.am](http://www.idealsystem.am) ինտերնետային կայքերում: Ներդրողները պարտատոմսերի ազդագրի էլեկտրոնային և/կամ տպագիր տարբերակները կարող են ձեռք բերել նաև «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում, հասցե՝ Վ. Սարգսյան 2, ք. Երևան և/կամ «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ում, հասցե՝ Թբիլիսյան խճուղի 25:

Պարտատոմսերի բաժանորդագրությանը կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ներկայացնելով սահմանված կարգով լրացված պարտատոմսերի բաժանորդագրության/ձեռքբերման հայտ/երը: Ներդրողները հայտի օրինակը կարող են ստանալ նաև «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ հաճախորդների սպասարկման սրահում:

Հրապարակային առաջարկի շրջանակում պարտատոմսերը տեղաբաշխվելու են ըստ ներդրողների կողմից ներկայացված մինչև մարումը տարեկան եկամտաբերության՝ համաձայն Թողարկողի կողմից հաստատված պարտատոմսերի թողարկման կարգի և պայմանների:

ՏԵՂԱԲԱՇԽՈՂ

ԹՈՂԱՐԿՈՂ



«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ  
Վ. Սարգսյան 2,  
ք. Երևան, 0010, ՄՄ  
հեռ: 56 11 11,  
ֆաքս: 56 59 58,  
Էլ-փոստ: [office@ameriabank.am](mailto:office@ameriabank.am)



«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ  
Թբիլիսյան խճուղի 25.,  
ք. Երևան, ՄՄ  
հեռ: 20 71 91,  
ֆաքս: 28-20-81  
Էլ-փոստ: [imex@arminco.com](mailto:imex@arminco.com)